



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 26 - Ա
03 մարտի 2014 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ
ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ ապրիլի 16-ին «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղների ժամանակ» թեմայով իմ ղեկավարությամբ հրամանատարաշտաբային ուսումնավարժությունը նախապատրաստելու և արդյունավետ անցկացնելու համար ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

փ/ծ գնդապետ Բարսեղյան Մ. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

փ/ծ փոխգնդապետ Աբրահամյան Հ. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, շտաբի պետի տեղակալ

2. Շտաբում ստեղծել հետևյալ աշխատանքային խմբերը.

1) խաղարկման և վերլուծման խումբ՝

փ/ծ մայոր Մանուկյան Դ. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, խմբի պետ

փ/ծ ավագ լեյտենանտ Գորոյան Վ. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ

փ/ծ լեյտենանտ Պետրոսյան Ա. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ

- 2) գործնական միջոցառումների կազմակերպման խումբ՝
փ/ծ մայրո Հակոբյան Գ. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, խմբի պետ
փ/ծ մայրո Առաքելյան Ա. - Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
փ/ծ լեյտենանտ Սիմոնյան Ա. - Գավառի թիվ 32 հրշեջ փրկարարական ջոկատի խմբի պետ

3. Ուսումնավարժությանը ներգրավել մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին, տարահանման հանձնաժողովին, մարզային փրկարարական վարչությանը, Վ.Գետաշեն, Ն. Գետաշեն համայնքների ղեկավար կազմերին, աղետների բժշկության, ոստիկանության համապատասխան խմբերին, գազի, ջրի, էներգամատակարարման վթարավերականգնողական խմբերին, Վ.Գետաշեն և Ն. Գետաշեն համայնքների կազմավորումներին:

4. Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելվածի:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Մ. Բարսեղյանին՝

- 1) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և սահմանված ժամկետներում ներկայացնել իմ հաստատմանը.
- 2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.
- 3) մարզային փրկարարական վարչության ծառայողների կազմից ստեղծել միջնորդների խումբ.
- 4) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև ս/թ ապրիլի 11-ը:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

- 1) ճշգրտել համապատասխան պլանները.
- 2) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.
- 3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ